			ֆինանսական գործակալի կողմից դրամական պահանջին հաջորդող զիջում չի թույլատրվում, եթե այլ բան մախատեսված չէ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով
			պարտապանը պարտավոր է ֆինանսական գործակալին վճարել՝ պայմանով, եթե նա հաճախորդից կամ ֆինանսական գործակալից գրավոր ծանուցում է ստացել դրամական պահանջը տվյալ ֆինանսական գործակալին զիջելու մասին, և այդ ծանուցման մեջ սահմանված է կատարման ենթակա դրամական պահանջը, ինչպես նաև նշված է այն գործակալը, ում պետք է վճարվի
			սխալ պատասխանը նշված չէ
	243	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից որն է սխալ՝	ֆինանսական վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր,
			ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած սպառվող գույք,
			անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:
			անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման
	244	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից, որն է սխալ՝ Ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ	վարձակալված գույքը, վարձակալության ժամկետի ավարտից հետո, պայմանագրով նախատեսված գինը վճարելուց հետո, անցնում է վարձակալի սեփականությանը,
			վարձակալված գույքը, մինչև վարձակալության պայմանագրի ավարտը, պայմանագրով նախատեսված գինը վճարելուց հետո, անցնում է վարձակալի սեփականությանը,
			վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը առանց վճարի հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար::
			վարձակալված գույքը, մինչև վարձակալության պայմանագրի ավարտը, պայմանագրով նախատեսված գինը վճարելուց հետո, չի անցնում վարձակալի սեփականությանը,
	245	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, փոխառության պայմանագիրը կնքված է համարվում.	նոտարի կողմից վավերացվելու պահից
			կողմերի ստորագրելու պահից
			դրամ կամ այլ գույք հանձնելու պահից

		կենտրոնական բանկում հաստատվելու պահից
246	Համաձային ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, պետական փոխառության պայմանագրով որպես փոխառու կարող է (են) հանդես գալ.	Հայաստանի Հանրապետությունը և իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետությունը և միջազգային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետությունը և օտարերկրյա
247	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	պետական փոխառությունները կամավոր են փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր կամ բանավոր փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրան կամ այլ գույք հանձնելու պահից փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով բացառապես գրավոր
248	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, վարկային պայմանագիրը կնքվում է.	բանավոր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ գրավոր կամ բանավոր՝ ըստ կողմերի համաձայնության ճիշտ պատասխանը նշված չէ
249	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը կնքվում է գրավոր բոլոր պատասխանները ճիշտ են
250	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, բանավոր կարող է կնքվել.	վարկային պայմանագիրը գրավի պայմանագիրը փոխառության պայմանագիրը ճիշտ պատասխանը նշված չէ
251	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել.	յուրաքանչյուր սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ երկու և ավելի սեփականատերերի գրավոր համաձայնությամբ սեփականատերերի կեսից ավելիի գրավոր համաձայնությամբ բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ
252	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում իր բաժինը գրավ դնել.	դատարանի թույլտվության հիման վրա մյուս սեփականատերերի գրավոր համաձայնությամբ առանց մյուս սեփականատերերի համաձայնության ճիշտ պատասխանը նշված չէ
253	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա հաջորդող գրավը թույլատրվում է ըստ վարկային կազմակերպության խորհրդի որոշման հաջորդող գրավի դեպքում նոր գրավառուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավառուի պահանջները բավարարելուց հետո գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից
254	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, եթե գրավ դրված գույքը գտնվում է գրավատուի մոտ, ապա օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում գրավատուն պարտավոր է.	գրավ դրված գույքը լրիվ արժեքով ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից

			անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գրավ դրված գույքը պահպանելու համար
			մյուս կողմին անհապաղ տեղեկացնել գրավ դրված գույքի կորստյան կամ վնասվածքի սպառնալիքի ծագման մասին
			բոլոր պատասխանները ճիշտ են
	255	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը, իսկ այդ պահանջը չբավարարելու դեպքում՝ բռնագանձում տարածելու գրավի առարկայի վրա, եթե.	գրավատուի մոտ թողնված գրավի առարկան պայմանագրի պայմանների խախտմամբ դուրս է եկել նրա տիրապետությունից գրավատուն խախտել է գրավի առարկան փոխարինելու կանոնները գրավատուն խախտել է հաջորդող գրավի կանոնը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	256	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավի առարկայի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն դատարանի վճռով, եթե. (ա) գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է այլ անձի համաձայնություն կամ թույլտվություն (բ) գրավի առարկան հանրության համար նշանակալից պատմական արժեք ունեցող գույք է	միայն (ա) միայն (բ) (ա) և (բ)
	257	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավի տեսակ չի համարվում.	ճիշտ պատասխանը նշված չէ կոշտ գրավը գրավականը իրավունքների գրավի խիստ գրավը
	258	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, գրավական է համարվում այն գրավը, որի առարկան.	թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ թողնվում է գրավատուի մոտ՝ գրավի մասին վկայող նշաններով անցնում է գրավառուի տիրապետմանը պահվում է բանկում կամ նոտարի մոտ
	259	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով, կոչվում է.	չրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ գրավական հիփոթեք կոշտ գրավ
	260	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	օգտագործման իրավունքը գույքը փաստացի օգտագործելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է տիրապետման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է բոլոր պատասխանները ճիշտ են
	261	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ֆինանսական լիզինգի պայմանագրի պարտադիր պայման է, որ.	լիզինգի առարկա հանդիսացող գույքը վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է վարձատու լիզինգի պայմանագրի ավարտից հետո այն անցնում է լիզինգառուին ֆինանսական վարձակալության առարկա կարող է լինել միայն շարժական գույքը անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման



			վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից
			փոխառության և վարկային պայմանագրերը կնքվում են գրավոր
			փոխառություն կարող է տրամադրել ցանկացած անձ, իսկ վարկ՝ միայն բանկ կամ այլ վարկային կազմակերպություն
			փոխառությունը և վարկը կարող է տրամադրվել առանց տոկոսների վճարման պայմանի
		Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, արժեթուղթ է համարվում. (ա) պարտատոմսը (բ) բաժնետոմսը (գ) երկակի պահեստային վկայագիրը (դ) հասարակ վկայագիրը	
		263	միայն (ա) և (բ)
			միայն (ա), (բ) և (դ)
			միայն (ա), (բ) և (գ)
			(ա), (բ), (գ), (դ)
		264	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, արժեթուղթ չի համարվում. չեկը, կոնոսամենտը բանկային վկայագիրը ճիշտ պատասխանը նշված չէ
		265	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. պարտատոմսը ինվեստիցիոն արժեթուղթ է հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը վճարային արժեթղթեր կոնոսամենտը տիտղոսային արժեթուղթ է չեկը ինվեստիցիոն արժեթուղթ է
		266	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. որպես ֆինանսական գործակալ՝ կարող են հանդես գալ բանկերը, այլ վարկային կազմակերպությունները, ինչպես նաև նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն ունեցող այլ առևտրային կազմակերպությունները գիջման առարկա կարող է լինել ինչպես ներկա, այնպես էլ ապագա դրամական պահանջը պարտապանի նկատմամբ դրամական պահանջը հաճախորդը կարող է ֆինանսական գործակալին զիջել նաև վերջինիս հանդեպ իր պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով բոլոր պատասխանները ճիշտ են
		267	Նշել սխալ պնդումը. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի. փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումար) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը, ընդ որում տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

			այն դեպքում, երբ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսուրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով
	268	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի՝	ընկերության խոշոր հաճախորդների եզրակացությամբ, ընկերության վերստուգող հանձնաժողովի եզրակացությամբ, ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ եզրակացությամբ, բոլոր պատասխանները ճիշտ են:
	269	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպությունների խորհրդի անդամների պարզևավճարների և/կամ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանում է	ՀՀ կենտրոնական բանկը, վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի ներկայացմամբ՝ ՀՀ Կենտրոնական բանկը, վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը, վարկային կազմակերպության խորհրդի նախագահը:
	270	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավունք	տարեկան արդյունքներով շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, ընկերության կանոնադրության հաստատումը, աուդիտ իրականացնող անձի հաստատումը:
	271	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության գործադիր մարմինը ձևավորվում է	բացառապես վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, վարկային կազմակերպության խորհրդի կողմից, վարկային կազմակերպության խորհրդի ներկայացմամբ՝ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին:
	272	Նշել ճիշտ տարբերակը. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության հաստիքացուցակը հաստատում է (ա)ընկերության գործադիր մարմինը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ լիազորությունը փոխանցվել է ընկերության գործադիր մարմնին, (բ) ընկերության խորհուրդը, (գ) ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը.	միայն (ա), միայն (բ), միայն (գ), (ա) կամ (բ):
	273	Նշված պնդումներից որն է սխալ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝	խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տեղափոխումը չի սահմանափակվում, խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի կողմից, որը չի կարող 3 անդամից պակաս լինել, խորհրդի անդամ կարող են լինել միայն ընկերության մասնակիցները կամ բաժնետերերը,

			գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել:
274	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն նշված լիազորություններից բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհուրդը իրավասու է իրականացնել		ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, աուդիտ իրականացնող անձի հաստատումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ, նշված բոլոր լիազորությունների իրականացման բացառիկ իրավասությունը պատկանում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին:
275	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, նշված պնդումներից որն է սխալ		այն կազմակերպություններում որտեղ խորհուրդ ձևավորված չէ, խորհրդի իրավասությունները իրականացնում է մասնակիցների ընդհանուր ժողովը, օրենքով սահմանված մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ բոլոր իրավասությունները կարող են փոխանցվել ընկերության խորհրդին, եթե կանոնադրությամբ նման դրույթ նախատեսված է, ընկերության խորհրդի նախագահին ընտրում են ընկերության խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:
276	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության աուդիտ իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է՝		վարկային կազմակերպության գործադիր տնօրենը, վարկային կազմակերպության գործադիր տնօրենը, կամ վեջինիս կողմից տրված լիազորագրի հիման վրա՝ վարկային կազմակերպության աշխատակիցը, վարկային կազմակերպության խորհրդի նախագահը, վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահը:
277	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավասությունն է՝		ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը, ընկերության մասնաճյուղի ստեղծումը, ընկերության կանոնադրության հաստատումը, ՍՊԸ-ների խորհրդի բացառիկ իրավասությունները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ:
278	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության գործադիր տնօրենը միաժամանակ հանդիսանում է վարկային կազմակերպության		խորհրդի անդամ, վարչության նախագահ (կանոնադրությամբ վարչություն նախատեսված լինելու դեպքում) վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ:
279	Նշված պնդումներից որն է սխալ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝		ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում, ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը արտասահմանում, ընկերության գլխավոր տնօրենը տնօրինում է ընկերության գույքը, բացառությամբ ֆինանսական միջոցների, որը տնօրինում է ընկերության խորհուրդը, ընկերության գլխավոր տնօրենը գործում է առանց լիազորագրի:

280	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.	կանոնադրության հաստատումը ընկերության վերակազմակերպումը հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը բոլոր պատասխանները ճիշտ են
281	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է.	ընդունել ավանդներ միայն ֆիզիկական անձանցից ընդունել ավանդներ միայն իրավաբանական անձանցից ընդունել ավանդներ իրավաբանական, իսկ ԿԲ համաձայնությամբ՝ նաև ֆիզիկական անձանցից բոլոր պատասխանները սխալ են
282	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.	ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը ընկերության մասնաճյուղերի և հիմնարկների ստեղծումը ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը
283	Բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.	ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը ճիշտ պատասխանը նշված չէ
284	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը հանդիսանում է.	ընկերության ընդհանուր ժողովի իրավասությունը ընկերության խորհրդի իրավասությունը ընկերության գլխավոր տնօրենի իրավասությունը ընկերության վերստուգող հանձնաժողովի իրավասությունը
285	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք չունեն.	ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը ընկերության բաժնետերեր չհանդիսացող խորհրդի անդամները ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները ճիշտ պատասխանը նշված չէ
286	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.	ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով ընկերության բաժնետերեր չհանդիսացող խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով բոլոր պատասխանները ճիշտ են
287	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությունում պետք է ստեղծվի խորհուրդ, եթե.	ընկերությունն ունի 50 և ավելի բաժնետեր ընկերությունն իրականացնում է առևտրային գործունեություն ընկերության բաժնետերերի 50 և ավելի տոկոսը կայացրել է խորհուրդ ձևավորելու որոշում ճիշտ պատասխանը նշված չէ
288	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում.	կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը

			բոլոր պատասխանները ճիշտ են
289	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ժողովի իրավասությանն են պատկանում. (ա) ընկերության վերակազմակերպումը (բ) բաժնետոմսերի կոնսոլիդացիան (գ) ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը		միայն (ա) միայն (ա) և (բ) միայն (բ) և (գ) (ա), (բ) և (գ)
290	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.		խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը կարող են փոխանցվել ընկերության գործադիր մարմնի լուծմանը միայն ընկերության ժողովի համաձայնությամբ ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է ընկերության բաժնետերերի ծանոթացման համար
291	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը կազմում է.		մեկ տարի երեք տարի հինգ տարի ճիշտ պատասխանը նշված չէ
292	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, եթե ընկերության խորհրդի անդամների թիվը նվազում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա.		ընկերությունը պետք է լուծարվի ընկերությունը պետք է վերակազմակերպվի ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի ընկերությունը պետք է փոփոխի կանոնադրությունը
293	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինների ձևավորումը կատարվում է.		բացառապես ընկերության ժողովի որոշմամբ բացառապես ընկերության խորհրդի որոշմամբ ընկերության ժողովի և խորհրդի համատեղ որոշմամբ ընկերության ժողովի որոշմամբ, եթե կանոնադրությամբ այդ հարցերը չեն վերապահված խորհրդի իրավասությանը
294	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.		եթե ընկերության կանոնադրությամբ միաժամանակ նախատեսված են միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմիններ, ապա ընկերության խորհրդի որոշմամբ պետք է սահմանազատվի դրանցից յուրաքանչյուրի իրավասությունը ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը ժողովի որոշմամբ, ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պամանագրով կարող են տրվել առևտրային միանձնյա գործադիր մարմինը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն խորհրդի
295	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գույքը, ալոթվում՝ ֆինանսական միջոցները, տնօրինում է.		ընկերության ժողովը ընկերության խորհուրդը ընկերության տնօրենը ընկերության ներքին ատոլիտի ղեկավարը

	296	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք:	անմեղ են ճանաչվել ընկերության ժողովի որոշմամբ
			ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել
			ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանից հետո մեկօրյա ժամկետում հրաժարական են տվել
			բոլոր պատասխանները ճիշտ են
	297	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք:	ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել
			ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունման նիստին ներկա չեն գտնվել
			չէին կարող իմանալ, որ իրենց գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությունը կկրի վնասներ
			բոլոր պատասխանները ճիշտ են
	298	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գործադիր մարմինը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից.	3 տարի ժամկետով
			5 տարի ժամկետով
			ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետով
			ճիշտ պատասխանը նշված չէ
	299	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ	վերստուգիչ հանձնաժողովի ստեղծումը պարտադիր է քսանից ավելի մասնակից ունեցող ընկերություններում
			ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է ընկերության խորհուրդը
			ընկերության ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները՝ ընկերության վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունների բացակայության դեպքում
			ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ընկերության խորհրդի անդամը, ընկերության գործադիր մարմնի անդամը
	300	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը.	կարող է իրականացնել ժողովը
			կարող են փոխանցվել գործադիր մարմնին
			կարող են փոխանցվել ընկերության վարչությանը, եթե կանոնադրությամբ դա նախատեսված է
			ճիշտ պատասխանը նշված չէ
	301	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության խորհրդի անդամների աշխատանքի վարձատրության պայմանները որոշում է.	ՀՀ կենտրոնական բանկը
			ՀՀ կենտրոնական բանկը՝ վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի ներկայացմամբ
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը
			վարկային կազմակերպության խորհրդի նախագահը
	302	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավունք է հանդիսանում.	լուծարման հաշվեկշռի հաստատումը
			վարկային կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը
			վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը
			աուդիտ իրականացնող անձի հաստատումը

	303	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնակիցների ժողովը	իրականացնում է վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության նկատմամբ օպերատիվ մոնիթորինգ և վերահսկողություն
			իրականացնում է վարկային կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով կամ վարկային կազմակերպության կանոնադրությամբ վերապահված են վարկային կազմակերպության խորհրդի բացառիկ իրավասությանը
			որպես վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմին, հաստատում է կանոնադրությունը
			որպես վարկային կազմակերպության կառավարման գործադիր մարմին, իրականացնում է օրենքով վերապահված լիազորությունները
	304	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	վերստուգիչ հանձնաժողովի նախագահին ընտրվում է վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է վարկային կազմակերպության խորհրդի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է վարկային կազմակերպության խորհրդի ներկայացմամբ՝ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի կողմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ
	305	Նշված պնդումներից ո՞րն է սխալ. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, հիմնադիր ժողովը	հաստատում է ընկերության կանոնադրությունը
			ընտրում է ընկերության խորհուրդը
			ընտրում է ընկերության վերստուգող հանձնաժողովը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	306	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է.	վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից
			վարկային կազմակերպության խորհրդի կողմից
			խորհրդի ներկայացմամբ՝ ընդհանուր ժողովի կողմից
			վարկային կազմակերպության գործադիր տնօրենի կողմից (կանոնադրությամբ վարչություն նախատեսված լինելու դեպքում՝ վարչության կողմից)
	307	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգում է.	սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ
			վարկային կազմակերպության գործադիր մարմնի պահանջով
			վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ
			վարկային կազմակերպության խորհրդի որոշմամբ
	308	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգում է.	վարկային կազմակերպության ներքին աուդիտի պահանջով
			վարկային կազմակերպության բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով
			ՀՀ ԿԲ պահանջով
			ճիշտ պատասխանը նշված չէ

	309	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային	վարչության նախագահի տեղակալը գործադիր տնօրենը վերստուգիչ հանձնաժողովի անդամները բոլոր պատասխանները ճիշտ են
	310	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային միությունները կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպարավական ձևով (ձևերով) .	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն բաժնետիրական ընկերություն առևտրային կոոպերատիվ նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	311	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները կարող են ստեղծվել հետևյալ կազմակերպարավական ձևով (ձևերով) .	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն բաժնետիրական ընկերություն առևտրային կոոպերատիվ նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	312	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն.	ավանդների ներգրավումը ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերի հրապարակային թողարկումը վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը ճիշտ պատասխանը նշված չէ
	313	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն.	այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու հետ այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն ծառայություններ մատուցելու հետ այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջն աշխատանքներ կատարելու հետ



			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
314	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում		գրանցման և լիցենզավորման դիմումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով
			վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 6 օրինակից
			վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
315	Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում		գրանցման և լիցենզավորման դիմումը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով
			վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 6 օրինակից
			վարկային կազմակերպության գործունեության առաջիկա երեք տարվա տնտեսական ծրագիրը՝ կազմված վարկային կազմակերպության կողմից սահմանված ձևաչափով (ֆորմատով)
			վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցման հայտ
316	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է.		վարկային կազմակերպության գործունեության տեսակը
			վարկային կազմակերպության միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները
			վարկային կազմակերպության գործունեության կարգը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
317	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է.		վարկային կազմակերպության գործունեության տեսակը
			կանոնադրական կապիտալի չափը
			վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցներին
			վարկային կազմակերպության ղեկավարներին
318	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը սահմանում է.		կանոնադրական կապիտալի չափը
			վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցներին
			վարկային կազմակերպության ղեկավարներին
			ճիշտ պատասխանը նշված չէ

		Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկում գրանցվելու պահից. ա) վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ բ) վարկային կազմակերպությունը համարվում է լիցենզավորված գ) վարկային կազմակերպությունը վճարում է կանոնադրական կապիտալը դ) վարկային կազմակերպությունը իր գործունեության տարածքը համապատասխանեցնում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին	
319			միայն ա) և բ) տարբերակները
			միայն բ) և գ) տարբերակները
			միայն ա), բ) և դ) տարբերակները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
		Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը քննարկում է գրանցվելու և լիցենզիա ստանալու դիմումը և որոշում է կայացնում դիմումը բավարարելու կամ մերժելու մասին	
320			մեկամսյա ժամկետում
			երեք ամսյա ժամկետում
			մեկ տարվա ընթացքում
			ճիշտ պատասխանը նշված չէ
		Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը համարվում է	
321			ՀՀ դրամով, բացառությամբ բաժնետոմսերի դիմաց վճարումների
			ՀՀ դրամով, բացառությամբ վարկային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքերի
			ՀՀ դրամով, ինչպես նաև արտարժույթային առաջին խմբի մեջ մտնող արժույթներով
			ճիշտ պատասխանը նշված չէ
		Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	
322			վարկային կազմակերպության լիցենզիան տրամադրվում է 3 տարի ժամկետով
			վարկային կազմակերպության լիցենզիան չի կարող այլ անձանց տրվել օգտագործման, օտարվել կամ
			Վարկային կազմակերպությունների միությունը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյանը
			նշված բոլոր պնդումները ճիշտ են
		Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը սահմանում է. ա) լիցենզիաների գրանցամատյանի ձևը բ) լիցենզիաների գրանցամատյանի վարման կարգը գ) լիցենզիաների գրանցամատյանում ներառվող տեղեկությունները դ) վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը	
323			միայն դ) տարբերակը
			միայն բ) և գ) տարբերակները
			միայն ա), գ) և դ) տարբերակները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
		Վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել	
324			դատարանի կողմից ֆինանսական ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք

			դատարանի կողմից մաքսային ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք
			դատարանի կողմից իրավական ոլորտում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք
			բոլոր պատասխանները ճիշտ են
	325	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, լիցենզիայի գրանցամատյանները վարում է.	Կենտրոնական բանկը Վարկային կազմակերպությունների միությունը Ֆինանսական հաշտարար Ֆինանսների նախարարությունը
	326	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը գրանցումից հանվում է	վարկային կազմակերպության դիմումի հիման վրա և վարկային կազմակերպության լուծարման դեպքում Եթե չի վճարել Ֆինանսական հաշտարարի գրասենյակի տարեկան վճարը վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	327	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման դիմումը, եթե.	դիմումի տրման պահին վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է Կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	328	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է	իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել դիերային գործունեություն պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել ենթապահառուական գործունեություն նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	329	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող.	ի պահ ընդունել արժեթղթեր մատուցել ֆինանսական խորհրդատվություն ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ ճիշտ պատասխանը նշված չէ
	330	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպություններին (բացառությամբ սպառողական կրեդիտավորում իրականացնող կազմակերպությունների) արգելվում է.	իրականացնել արտադրական գործունեություն իրականացնել առևտրային գործունեություն իրականացնել լիցենզավորման ենթակա այլ գործունեություն նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	331	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են իրենց կանոնադրության մեջ պարտադիր ներառել որոշյալներ.	տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի ֆունկցիաների տարանջատման վերաբերյալ, արտաքին աուդիտի իրականացման մեխանիզմների վերաբերյալ.

			տնօրենների, հիմնական ղեկավարների, գլխավոր հաշվապահի, տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի աշխատանքների մեխանիզմների
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	332	ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների պարտավոր են ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել՝	հաշվապահական հաշվառման ստորաբաժանման պետի փոփոխությունները կանոնադրությունում կատարված փոփոխությունները, վարկային կազմակերպության վարկային վարչության պետի փոփոխությունը,
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	333	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը հանում է գրանցումից վարկային կազմակերպության ղեկավարին, եթե	նա գրկվել է որակավորման վկայականից ավարտվել է որակավորման վկայականի ժամկետը նա սնանկ է ճանաչված և ունի չմարված պարտավորություններ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	334	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից,	որին նշանակում է վարկային կազմակերպությունը որին նշանակում է Կենտրոնական բանկը
			որին նշանակում է Կենտրոնական բանկը՝ վարկային կազմակերպության առաջարկով
			որին նշանակում է վարկային կազմակերպությունը՝ նախօրոք համաձայնեցնելով Կենտրոնական բանկի հետ
	335	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո 15-օրյա ժամկետում
			Վարկային կազմակերպությունները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը
			Վարկային կազմակերպությունները պարտավոր են մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 15-ը հրապարակել իրենց ամսական ֆինանսական հաշվետվությունները
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	336	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպությունների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել, եթե	վարկային կազմակերպությունը ֆինանսական գործառնություններ է իրականացրել օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով
			ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են կեղծ տվյալներ
			վարկային կազմակերպությունը չի կատարել կենտրոնական բանկի կողմից տրված՝ խախտումները վերացնելու հանձնարարականը

			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
337	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվները		պետք է սահմանեն կարգավորման ավելի մեղմ ռեժիմ, քան սահմանված է բանկերի համար կարող են սահմանել կարգավորման ավելի մեղմ ռեժիմ, քան սահմանված է բանկերի համար կարող են սահմանել կարգավորման ավելի խիստ ռեժիմ, քան սահմանված է բանկերի համար
			ճիշտ պատասխանը նշված չէ
338	Նշեք ճիշտ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,		հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և միանշանակ պետք է նույնը լինեն միևնույն տիպի բոլոր վարկային կազմակերպությունների համար հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր չեն հիմնական տնտեսական նորմատիվները պարտադիր են և պետք է նույնը լինեն միևնույն տիպի բոլոր վարկային կազմակերպությունների համար, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնք գործում են օրենքով սահմանված սահմանափակումների շրջանակում
			ճիշտ պատասխանը նշված չէ
339	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ԿԲ կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը խստացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում		պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո, եթե ավելի վաղ ժամկետ նախատեսված չէ պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել
340	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ԿԲ կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը մեղմացնելու դեպքում այդ նորմատիվներն ուժի մեջ են մտնում		պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի շուտ ժամկետ չի սահմանել պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել
341	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների նկատմամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել, եթե		վարկային կազմակերպությունը ֆինանսական գործառնություններ է իրականացրել օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներով խախտվել են վարկային կազմակերպությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները խախտվել են ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգն ու պայմանները
			ճիշտ պատասխանը նշված չէ

342	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող պատճառմիջոց է	տուգանքը վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահին որակավորան վկայականից գրկումը վարկային կազմակերպության գործադիր տնօրենին որակավորման վկայականից գրկումը բոլոր պատասխանները ճիշտ են
343	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կարող է ԿԲ որոշմամբ կիրառվել նաև	տուգանք նախագգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում բոլոր պատասխանները ճիշտ են
344	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կարող է ԿԲ որոշմամբ կիրառվել նաև	տուգանք լիցենզիայի կասեցում՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում բոլոր պատասխանները ճիշտ են
345	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կարող է ԿԲ որոշմամբ կիրառվել տուգանք, որի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի	հարյուրապատիկը հազարապատիկը երկուհազարապատիկը չորսհազարապատիկը
346	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, բաժնետերերի տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո	մեկ ամսվա ընթացքում երեք ամսվա ընթացքում վեց ամսվա ընթացքում ճիշտ պատասխանը նշված չէ
347	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ժողովի իրավասությանն են պատկանում.	ընկերության վերակազմակերպումը ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը պարտատոմսերի տեղաբաշխումը բոլոր պատասխանները ճիշտ են
348	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ժողովի իրավասությանն են պատկանում.	պարտատոմսերի տեղաբաշխումը

		հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը
		ժողովների օրակարգի հաստատումը
		բոլոր պատասխանները ճիշտ են
349	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը կազմում է	երեք տարի
		հինգ տարի
		առավելագույնը հինգ տարի
		ճիշտ պատասխանը նշված չէ
350	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը	կազմում է հինգ տարի
		կազմում է առավելագույնը հինգ տարի
		կազմում է նվազագույնը հինգ տարի
		ճիշտ պատասխանը նշված չէ
351	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը	կազմում է երեք տարի
		կազմում է հինգ տարի
		չի սահմանափակվում
		ճիշտ պատասխանը նշված չէ
352	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	Բաժնետերերը քվեարկության ընթացքում իրավունք չունի ձայները բաշխել մի քանի թեկնածուների միջև
		Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը կազմում է երեք տարի
		500-ից ավել բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում խորհրդի նախագահի և տնօրենի (գլխավոր տնօրենի) պաշտոնները կարող են համատեղվել
		Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո
353	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է	ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը
		ընկերության խորհուրդը
		ընկերության գործադիր մարմինը
		ընկերության ներքին աուդիտը
354	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի.	ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը
		ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից
		ընկերության գլխավոր տնօրենը ներկայացնում է ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում
		բոլոր պատասխանները ճիշտ են
355	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության գլխավոր տնօրենը	տնօրինում է ընկերության ֆինանսական միջոցները

			տնօրինում է ընկերության գույքը
			ներկայացնում է ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	356	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խորհուրդը	պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում
			իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը
			հաստատում է ժողովների օրակարգը
			բոլոր պատասխանները ճիշտ են
	357	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից
			ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ
			վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) ընտրում է ժողովը՝ 5 տարի ժամկետով
			ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է խորհուրդը
	358	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է	Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող)
			Ընկերության գլխավոր հաշվապահ
			Ընկերության գործադիր տնօրեն
			Ընկերության խորհրդի նախագահ
	359	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, մինչև 50 բաժնետեր ունեցող ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասություններն իրականացնում է	ընկերության գլխավոր հաշվապահը
			ժողովը
			ընկերության վերստուգող հանձնաժողովը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	360	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. ա) ժողովն ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է բ) խորհուրդն իրականացնում է ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը գ) ընկերության գործադիր մարմինն իրականացնում է ընկերության ընդհանուր գործունեության ղեկավարումը	միայն ա) և բ) տարբերակները
			միայն բ) և գ) տարբերակները



			միայն ա) տարբերակը
			ճիշտ են բոլոր տարբերակները
	361	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել
			Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել
			Մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում խորհրդի նախագահի և տնօրենի (գլխավոր տնօրենի) պաշտոնները կարող են համատեղվել
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	362	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում	ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները
			ՀՀ-ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերը
			ՀՀ դեսպանությունը ԱՄՆ-ում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	363	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում. ա) ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները բ) միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները գ) օտարերկրյա պետության պետական ծառայության մեջ գտնվող` ՀՀ-ում ժամանակավորապես աշխատող ֆիզիկական անձինք դ) ֆիզիկական անձինք, որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում	միայն (ա), (բ) և (գ)
			միայն (գ), (դ) և (ե)
			միայն (ա), (բ), (դ) և (ե)
			(ա), (բ), (գ), (դ) և (ե)
	364	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում	ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրապետությունում 183 օր և ավելի,
			ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում

			ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող՝ ՀՀ տարածքից դուրս ժամանակավորապես աշխատող ֆիզիկական անձինք
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	365	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ են համարվում	միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող ղեկավարները
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող ղեկավարների ընտանիքի անդամները
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող այլ աշխատակիցներ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	366	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ռեզիդենտ չեն համարվում	ՀՀ-ում հաշվառված կազմակերպությունները
			ՀՀ-ում հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը
			ՀՀ-ում հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմաններից դուրս գտնվող ներկայացուցչությունները
181	Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանումների կանոնադրություններում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար վարկային կազմակերպությունները ներկայացնում են.		կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր, վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից շաղվածք՝ վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանման կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ, վարկային կազմակերպության կամ դրա տարածքային ստորաբաժանման փոփոխված կանոնադրությունը բոլոր պատասխանները ճիշտ են:
182	Համաձայն Կանոնակարգ 13-ի, նշվածներից ո՞րը չի համարվում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձի կողմից նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ պարտադիր ներկայացման փաստաթուղթ.		իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը, իրավաբանական անձի վերջին երեք տարիների տարեկան և վերջին միջամկյալ ֆինանսական հաշվետվությունները, վերջին երեք տարիների ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը, իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը՝ մինչև գրանցման պահը կատարված
183	Համաձայն Կանոնակարգ 13-ի, նշվածներից ո՞րը չի համարվում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի կողմից նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ պարտադիր ներկայացման փաստաթուղթ.		ֆիզիկական անձի կողմից վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում, վարկային կազմակերպության հաստատված կանոնադրությունը (3 օրինակ), ներդրման ենթակա միջոցների ծագման օրինականությունը հիմնավորող փաստաթղթեր, հայտարարագիր՝ վարկային կազմակերպության այլ մասնակիցների հետ փոխկապակցվածության վերաբերյալ:
184	Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով նշանակալից մասնակցությունը գրանցելու մեկամսյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավել, քան.		երկու շաբաթ ժամկետով, մեկ ամիս ժամկետով, երկու ամիս ժամկետով, երեք ամիս ժամկետով:



	185	Համաձայն Կանոնակարգ 13-ի, նշվածներից ո՞րը չի համարվում վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրների կողմից Կենտրոնական բանկ պարտադիր ներկայացման փաստաթուղթ.	Ֆիրմային անվանման գրանցման հայտը
			վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից հաստատված վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը,
			վարկային կազմակերպության հիմնադիրների գործունեության մասին տեղեկանքը,
			վարկային կազմակերպության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված վարկային կազմակերպության կանոնադրությունը:
	186	Նշել սխալ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկը գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե պահպանվել են հետևյալ պահանջները և ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը.	սխալ տարբերակը նշված չէ
			տարածքում գործող այլ բանկում բացված հաշվին ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը,
			Կենտրոնական բանկի վերահսկողների կողմից տեղեկություն ստուգման արդյունքում հաստատվել է, որ վարկային կազմակերպության գործունեության համար նախատեսված տարածքը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են Կանոնակարգ 13-ով սահմանված պահանջներին,
			վարկային կազմակերպության ղեկավարների որակավորումը և մասնագիտական համապատասխանությունը բավարարում է Կանոնակարգ 13-ով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության պահանջներին:
	187	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման պահից.	ինգորյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում են գրանցման վկայականը և ֆիրմային անվանման գրանցման վկայականը
			եռօրյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում է ֆիրմային անվանման գրանցման վկայականը
			ինգորյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում է լիցենզիան,
			եռօրյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում են գրանցման վկայականը, լիցենզիան
	188	Համաձայն Կանոնակարգ 13-ի, նշվածներից ո՞րն է հանդիսանում վարկային կազմակերպության գրանցման ու լիցենզավորման մերժման հիմք.	ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ, ներկայացված փաստաթղթերը թերի են, ներկայացվել են կեղծ տեղեկություններ, բոլոր պատասխանները ճիշտ են:
	189	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն Կանոնակարգ 13-ի, եթե վարկային կազմակերպության մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված է, որ վերջինս գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, ապա.	մասնաճյուղը կարող է չունենալ կառավարիչ, մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ, մասնաճյուղում դրամարկղային հանգույցի առկայությունը պարտադիր չէ, մասնաճյուղում համակարգչային ցանցի առկայությունը պարտադիր
	190	Համաձայն Կանոնակարգ 13-ի, դրամապահոցի բացակայության պարագայում վարկային կազմակերպությունը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե	դրամարկղում կանխիկ դրամի տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 մլն ՀՀ դրամը

			վարկային կազմակերպությունում տեղադրված է հատուկ չիրկիվող պահարան
			վարկային կազմակերպությունում տեղադրված չիրկիվող պահարանը ամրացված է դրամարկղի հատակին ու պատին
			բոլոր պատասխանները միասին:
	191	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկի ժամանակ նշված տարրերից ո՞րն (որո՞նք) է (են) պակասեցվում հիմնական կապիտալի մեծությունից: (ա) վարկային կազմակերպության կողմից տրված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները՝ զուտ հաշվեկշռային արժեքի չափով (բ) վարկային կազմակերպության հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով, (գ) արտադրական ձեռնարկությունների կանոնադրական հիմնադրամներում կատարված ներդրումները:	միայն (ա) միայն (ա) և (բ) միայն (բ) և (գ) միայն (գ)
	192	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն Կանոնակարգ 14-ի, հաշվետեր վարկային կազմակերպությունները պարտավոր են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում հաշվի բացման մասին.	10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին, 10 աշխատանքային օրվա ընթացքում բանավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին, մեկշաբաթվա ընթացքում գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին, մեկշաբաթվա ընթացքում բանավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:
	193	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման ժամանակ վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վերջինիս գոծունեության համար չօգտագործվող հիմնական միջոցները	հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից, հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են լրացուցիչ կապիտալի հաշվարկից, հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից, լրացուցիչ կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից:
	194	«Ա» վարկային կազմակերպությունը օտարերկրյա վարկանիշ չունեցող բանկին տրամադրել է վարկ, ընդ որում Համաշխարհային բանկը երաշխավորել է տվյալ վարկը: Ռ-իսկով կշռված ակտիվների հաշվարկում (եթե առկա չէ որևէ այլ ապահովվածություն) տվյալ վարկը կրնոգրվի.	0 տոկոս ռիսկի կշռով 20 տոկոս ռիսկի կշռով 50 տոկոս ռիսկի կշռով 100 տոկոս ռիսկի կշռով
	195	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշվածներից ո՞րը չի դասվում անավարտ ժամկետային գործառնությունների շարքին.	ֆյուչերս սվոպ, վարկային գծի չօգտագործված մաս, օպցիոն:
	196	Համաձայն Կանոնակարգ 14-ի, եթե վարկային կազմակերպությունը խախտել է Ն <sub>1</sub> (ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը) նորմատիվը, ապա վարկային կազմակերպությունը միանշանակորեն կխախտի.	ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը,

			արտարժույթային համախառն դիրքի և վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցության նորմատիվը,
			մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը,
			բոլոր պատասխանները սխալ են:
	197	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ունիվերսալ վարկային կազմակերպության մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի Ն <sub>3</sub> նորմատիվը սահմանված է՝	15%, 20%, 25%, 30%,
	198	Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում են 300 մլն դրամ: Վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանում է 60 մլն դրամ (հաշվեկշռային արժեք) արժողությամբ շենք և շինություն: Ընդ որում, 50 մլն դրամ արժողությամբ տարածքը վարկային կազմակերպությունն օգտագործում է իր գործունեության համար, իսկ 10 մլն. դրամ արժողությամբ ավտոկայանի տարածքը՝ որում կանգնեցվում են վարկային կազմակերպության ավտոմեքենաները: Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը կազմում է 200 մլն դրամ: Որքա՞ն է կազմում վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը:	355 մլն դրամ, 490 մլն դրամ, 435 մլն դրամ, 525 մլն դրամ,
	199	Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ սեփական շենքեր և շինությունների հաշվեկշռային արժեքը ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում է.	0 տոկոս ռիսկի կշռով, 20 տոկոս ռիսկի կշռով, 50 տոկոս ռիսկի կշռով, 100 տոկոս ռիսկի կշռով:
	200	Համաձայն Կանոնակարգ 14-ի, նշվածներից ո՞րը չի դասվում հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների շարքին	երաշխավորությունները, վարկային գծերի չօգտագործված մասերի հանրագումարը, ֆորվարդը, բոլորն էլ դասվում են:
	201	Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում են 500 մլն դրամ: Վարկային կազմակերպությունը այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում իրականացրել է ներդրումներ՝ 200 մլն դրամի չափով, այդ թվում. այլ վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում՝ 150 մլն դրամ և այլ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում՝ 50 մլն դրամ: Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը կազմում է 200 մլն դրամ: Որքա՞ն է կազմում վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը:	700 մլն դրամ, 525 մլն դրամ, 550 մլն դրամ, 450 մլն դրամ,
	202	Վարկային կազմակերպության նորմատիվային հիմնական կապիտալը՝ հաշվի առած հիմնական կապիտալից կատարված նվազեցումները, հավասար է 500 մլն դրամ: Վարկային կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների գծով ձևավորված վերագնահատման պահուստի մեծությունը կազմում է 150 մլն դրամ, որից 50 մլն-ը ձևավորվել է վարկային կազմակերպության գործունեության համար չօգտագործվող հիմնական միջոցների գծով: Վարկային կազմակերպության նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է.	750 մլն դրամ, 600 մլն դրամ,

			700 մլն դրամ, 650 մլն դրամ:
203	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆակտորինգային կազմակերպությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.		տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել ֆինանսական վարձակալություն՝ լիզինգ տրամադրել երաշխիքներ, բոլոր պատասխանները ճիշտ են:
204	Ո՞ր պնդումն է սխալ. Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային միությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.		տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ), տրամադրել երաշխիքներ, ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ,
205	Ո՞ր պնդումն է սխալ. Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող լիզինգային կազմակերպությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.		տրամադրել վարկեր, փոխառություններ, ճիշտ պատասխանը նշված չէ: մատուցել ֆինանսական խորհրդատվություն անհատ ձեռնարկատերերին մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ,
206	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող լիզինգային կազմակերպությունները կարող են իրականացնել հետևյալ գործառնությունները.		տրամադրել վարկեր, փոխառություններ, ֆինանսավորում, ֆակտորինգ, պայմանով, որ լիզինգային ընկերության ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը կազմում է 10 տոկոս անհատ ձեռնարկատերերին մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
207	Կանոնակարգ 15-ով սահմանված ամսական և եռամսյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը մասնաճյուղերի բանակից ելնելով՝ սահմանվում է մասնաճյուղեր չունեցող կամ մինչև 15 մասնաճյուղեր ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև.		հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրը ներառյալ, հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ, հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ:
208	Կանոնակարգ 15-ով սահմանված տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մասնաճյուղեր չունեցող կամ մինչև 15 մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ մինչև.		հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 10-րդ աշխատանքային օրը հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը ներառյալ,
209	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն Կանոնակարգ 15-ի, վարկային կազմակերպությունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո.		ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմանը պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար,

			ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար,
			ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար,
			ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ), միջոցներ ձեռնարկել՝ ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկություններն ապահովելու համար:
	210	Նշել ճիշտ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 15-ի, ո՞ր վարկային կազմակերպություններն են շաբաթական հաշվետվությունները ներկայացնում մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ներառյալ	մասնաճյուղեր չունեցող վարկային կազմակերպությունները, մինչև 15 մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունները, 16 և ավելի մասնաճյուղ ունեցող վարկային կազմակերպությունները, ցանկացած վարկային կազմակերպություն՝ անկախ մասնաճյուղերի քանակից կամ դրանց առկայությունից:
	211	Համաձայն կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է	3 տարի ժամկետով 1 տարի ժամկետով 5 տարի ժամկետով ճիշտ պատասխանը նշված չէ
	212	Չամաձայն կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝	առանց տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու դեպքում գործադիր տնօրենի որակավորման վկայական ստանալու ճիշտ պատասխանը նշված չէ
	213	Չամաձայն կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել	բանկի գլխավոր հաշվապահ բանկի գործադիր տնօրեն բանկի գործադիր տնօրենի տեղակալ ճիշտ պատասխանը նշված չէ
	214	Չամաձայն կանոնակարգ 13-ի, բանկի գործադիր տնօրենի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել	վարկային կազմակերպության գործադիր տնօրեն միաժամանակ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ և գործադիր տնօրեն միայն վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ բոլոր պատասխանները ճիշտ են
	215	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստային մասհանումները, կարգում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են ինքնուրույնաբար՝ ելնելով ա. արժեթղթերի ժամկետի մարման ավարտից հետո ժամկետանց օրերի թվից բ. թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումից գ. արժեթղթերի ցուցակված լինելուց (չլինելուց)	միայն «ա» և «բ» տարբերակները միայն «բ» և «գ» տարբերակները միայն «ա» և «գ» տարբերակները

			«ա», «բ», և «գ» տարբերակները
216	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերն անհուսալի են ճանաչվում.		ժամկետանց դառնալու 181-րդ օրը
			այն դեպքում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել
			այն դեպքում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվել է առանց իրավահաջորդության
			բոլոր պատասխանները ճիշտ են
217	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», անժամկետ արժեթղթերն անհուսալի են ճանաչվում, ա. եթե թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել բ. եթե թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարվել է առանց իրավահաջորդության գ. ժամկետանց դառնալու 181-րդ օրը		միայն «ա» և «բ» տարբերակները
			միայն «բ» և «գ» տարբերակները
			միայն «ա» և «գ» տարբերակները
			«ա», «բ», և «գ» տարբերակները
218	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստային մասհանումները, կարգում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են.		ինքնուրույնաբար
			ԿԲ պահանջով
			ԿԲ նախնական թույլտվությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ
219	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստային մասհանումները, կարգում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, բանկերը կատարում են.		ԿԲ վերահսկողության վարչության պահանջով
			ԿԲ նախնական համաձայնության առկայության դեպքում
			ԿԲ նախագահի անհատական որոշման հիման վրա
			ճիշտ պատասխանը նշված չէ
220	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», միջին ռիսկային դասակարգված արժեթղթերի դիմաց պահուստին մասնահումները կատարվում են՝		2-20 տոկոսի չափով
			20-70 տոկոսի չափով
			70-100 տոկոսի չափով
			ճիշտ պատասխանը նշված չէ
221	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», բարձր ռիսկային դասակարգված արժեթղթերի դիմաց պահուստին մասնահումները կատարվում են՝		2-20 տոկոսի չափով
			20-70 տոկոսի չափով
			70-100 տոկոսի չափով
			ճիշտ պատասխանը նշված չէ

		Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի հնվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի», միջին ռիսկային դասակարգված արժեթղթերի դիմաց պահուստին մասնահումները կատարվում են՝	10-30 տոկոսի չափով
			40-70 տոկոսի չափով
			30-60 տոկոսի չափով
			ճիշտ պատասխանը նշված չէ՝
	223	Նշել ճիշտ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպությունը գյուղական վայրերում վարկերի տրամադրման կամ վարկերի հավաքագրման գործունեություն սկսելուց կամ դադարեցնելուց հետո պետք է տեղեկացնի Կենտրոնական բանկին՝	մեկ շաբաթյա ժամկետում, մեկամսյա ժամկետում, 15-օրյա ժամկետում, ճիշտ պատասխանը նշված չէ՝
	224	Նշել սխալ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, բանկի ներքին աուդիտի ղեկավարի վկայական ստացած անձը կարող է աշխատել՝	վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամ, վարկային կազմակերպության վարչության անդամ, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի
	225	Նշել սխալ տարբերակը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ միջազգային համբավ և Ստանդարտ և Փուրջ կամ Մուդիզ վարկանիշային գործակալությունների կողմից սահմանված «L-» կամ «L3» և բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունները վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելիս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն՝	կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը, կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը և կանոնադրությունը՝ մինչև գրանցման պահը կատարված փոփոխություններով, տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	226	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշման պատճենը՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ, Կենտրոնական բանկ են ներկայացնում՝	ընդունման օրվանից հնգօրյա ժամկետում, ընդունման օրվանից եռօրյա ժամկետում , ընդունման օրվանից մեկշաբաթյա ժամկետում, ժամանակավորապես դադարեցնելու դեպքում կենտրոնական բանկին չեն տեղեկացնում
	227	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային միությունները չեն կարող՝	մատուցել ֆինանսական խորհրդատվություն, իրականացնել պարտքերի հետստացման գործունեություն, իրենց մասնակիցներին, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին մատուցել ֆինանսական գործակալի ((ներկայացուցչի) ծառայություններ,

			ՀՀ տարածքում գործող վարկային միությունները վերը նշված բոլոր գործառնություններն էլ կարող են իրականացնել:
228	Համաձայն Կանոնակարգ 14-ի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆակտորինգային կազմակերպությունները կարող են՝		կնքել դրամի և արտարժույթի սվոյ,
			կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերս,
			ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն,
			ՀՀ տարածքում գործող ֆակտորինգային կազմակերպությունները վերը նշված բոլոր գործառնություններն էլ կարող են իրականացնել:
229	Ունիվերսալ վարկային միության նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է 500 մլն դրամ և փոխառուի հետ փոխկապակցված անձին տրամադրել է 35 մլն դրամ վարկ: Այլ հավասար պայմաններում ունիվերսալ վարկային կազմակերպությունը՝		խախտում է Ն3 (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ) նորմատիվը,
			խախտում է Ն1 (ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը)
			խախտում է կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվը ,
			ընդհանրապես նորմատիվ չի խախտում:
230	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկի ժամանակ վարկային կազմակերպության հիմնական կապիտալից նվազեցվում են՝ (1) ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի չափով, (2) վարկային կազմակերպության սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը չգերազանցող գումարի չափով, (3) վարկային կազմակերպության կողմից վարձակալված հիմնական միջոցների բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդի չափով, (4) վարկային կազմակերպության հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով:		(1) և (2), միայն (2), (1) և (2) և (3), (1) և (2) և (3) և (4):
231	Ենթադրենք «Ա» վարկային կազմակերպությունը ՀՀ տարածքում գործող «Բ» բանկի հետ կնքում է ռեպո համաձայնագիր («Ա» վարկային կազմակերպությունը վաճառում է «Բ» բանկին կարճաժամկետ պետական պարտատոմսեր, ընդ որում ստացված կանխիկ միջոցների մեծությունը գերազանցում է վաճառված արժեթղթերի արժեքը): Նշված գործառնության արդյուքնում «Ա» վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հանրագումարը, այլ հավասար պայմաններում.		չի փոփոխվի, կնվազի, կաճի, հարցում նշված տարրերը չեն մտնում ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում:
232	Համաձայն Կանոնակարգ 14-ի, ֆակտորինգային կազմակերպության կապիտալի համարժեքության Ն <sub>1</sub> նորմատիվը սահմանված է նվազագույնը՝		2%, 6%, 8%, 10%:
233	Համաձայն Կանոնակարգ 14-ի, խնայողական միության մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի Ն <sub>3</sub> նորմատիվը սահմանված է՝		15%, 20%, 25%, 30%:



	234	Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության վարկային գծերի չօգտագործված մասերի հանրագումարը (ՀՀ դրամով) ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում է.	0 տոկոս ռիսկի կշռով, 20 տոկոս ռիսկի կշռով, 50 տոկոս ռիսկի կշռով, 100 տոկոս ռիսկի կշռով:
	235	Համաձայն Կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության վարկային գծերի չօգտագործված մասերի հանրագումարը (արտարժույթով) ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում է.	30 տոկոս ռիսկի կշռով, 20 տոկոս ռիսկի կշռով, 50 տոկոս ռիսկի կշռով, 75 տոկոս ռիսկի կշռով:
	236	Համաձայն կանոնակարգ 14-ի, պարտատուների հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություններ գրավելու նպատակով կենտրոնական բանկ դիմում կարող է ներկայացնել այն թողարկող վարկային կազմակերպությունը, որի ընդհանուր կապիտալը դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ կազմում է առնվազն	150 մլն. ՀՀ դրամ 300 մլն. ՀՀ դրամ 600 մլն. ՀՀ դրամ Ճիշտ պատասխանը նշված չէ
	237	Ո՞ր պնդումն է սխալ. Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության կողմից տրված փոխառությունը համարվում է երկարաժամկետ ստորադաս փոխառություն, եթե՝	փոխառությունը տրամադրվել է հինգ տարուց ոչ պակաս ժամկետով փոխառությունն ամբողջությամբ վճարված չէ փոխառությունը ժամկետից շուտ մարման ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի փոխառությունը չի տրամադրվել փոխառուի նկատմամբ որոշակի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով
	238	Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում թղթակցային հաշիվները ՄԴՈ-ի զամբյուղի մեջ մտնող արտարժույթով ընդգրկվում են հետևյալ ռիսկի կշռով.	0 տոկոս 30 տոկոս 20 տոկոս 50 տոկոս
	239	Վարկային միության ընդհանուր նորմատիվային կապիտալը կազմում է 200 մլն դրամ, վարկային միությունը իր փոխառուի հետ փոխկապակցված անձին առավելագույնը որքան վարկ տրամադրելու դեպքում չի խախտի Ն <sub>3</sub> (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ) նորմատիվը	50 մլն դրամ, 10 մլն դրամ 100 մլն դրամ, 5 մլն դրամ,
	240	Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում թղթակցային հաշիվները հայկական դրամով ու դրանց գծով հաշվարկված տոկոսները ընդգրկվում են հետևյալ ռիսկի կշռով.	0 տոկոս ռիսկի կշռով, 100 տոկոս ռիսկի կշռով, 20 տոկոս ռիսկի կշռով, 30 տոկոս ռիսկի կշռով
	241	Համաձայն կանոնակարգ 14-ի, վարկային կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում Արժույթի միջազգային հիմնադրամի նկատմամբ արտարժույթային պահանջները կշռվում են	0 տոկոս ռիսկի կշռով 10 տոկոս ռիսկի կշռով 20 տոկոս ռիսկի կշռով

			30 տոկոս ռիսկի կշռով
242	Համաձայն Կանոնակարգ 14-ի, դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի ՀՀ պետական մուրհակներ և վերջիններով ապահովված պահանջներ, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տոկոսները ընդգրկվում են ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում՝		0 տոկոս ռիսկի կշռով, 10 տոկոս ռիսկի կշռով, 20 տոկոս ռիսկի կշռով, 100 տոկոս ռիսկի կշռով
243	Համաձայն Կանոնակարգ 13-ի, ՀՀ ԿԲ-ն մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե		ներկայացվել են կեղծ տեղեկություններ ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգում կատարված էական կանխատեսումները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով անիրատեսական են բոլոր պատասխանները ճիշտ են
244	Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության կրճատ ֆիրմային անվանումը պետք է բովանդակի.		վարկային կազմակերպության անվանումը վարկային կազմակերպության կոնկրետ տիպը (խումբը) կազմակերպաիրավական ձևը (հասպտումներով) նշված բոլոր պատասխանները միասին
245	Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության կրճատ ֆիրմային անվանումը պետք է բովանդակի. ա) վարկային կազմակերպության անվանումը բ) վարկային կազմակերպության կոնկրետ տիպը (խումբը) գ) կազմակերպաիրավական ձևը (հասպտումներով) դ) վարկային կազմակերպության գտնվելու վայրը ե) վարկային կազմակերպության ֆինանսական գործառնությունները		միայն ա), գ), ե) տարբերակները միայն ա), բ), գ) տարբերակները միայն ա), դ), ե) տարբերակները միայն բ), գ), ե) տարբերակները
246	Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպությունները պետական գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում.		վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի (հիմնադիրների ժողով) կողմից հաստատված վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը հայտարարագիր վարկային կազմակերպության աշխատանքային ժամերի վերաբերյալ հայտարարագիր վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ նշված բոլոր պատասխանները ճիշտ են
247	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը համապատասխան փաստաթղթերն ու տեղեկությունները ստալու պահից		մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը կամ մերժում է դրա գրանցումն ու մեկամսյա ժամկետում գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը մեկամսյա ժամկետում վարկային կազմակերպությանը ներկայացնում է ստացված փաստաթղթերի ու տեղեկությունների ամբողջականության վերաբերյալ դիտողություններ ճիշտ պատասխանը նշված չէ
248	Համաձայն Կանոնակարգ 13-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերին, այդ թվում՝		չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը

			վարկային կազմակերպության առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը կամ ներքին հսկողության համակարգը բավարար չեն վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար
			վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին, գործունեության կանոնակարգում ներկայացված տվյալներն անարժանահավատ են
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	249	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե	տարածքում գործող այլ բանկում բացված հաշվին ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը
			վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձինք ստացել են Կենտրոնական բանկի համաձայնությունը
			վարկային կազմակերպության հետ կապված անձինք ստացել են Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	250	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ. ա) Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը բ) վարկային կազմակերպության ղեկավարների թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամների թեկնածուների) պետք է հերթագրվեն՝ ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը մասնակցելու համար գ) Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի համապատասխան միջնորդագիրը՝ որակավորված լինելու դեպքում	միայն ա) և բ) տարբերակները
			միայն ա) և գ) տարբերակները
			ճիշտ են ա), բ) և գ) տարբերակները
			ճիշտ պատասխանը նշված չէ
	251	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ մեկտեղ.	Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը
			Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն վարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը
			Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն վարկային կազմակերպության աշխատանքային օրերի և ժամերի վերաբերյալ հայտարարությունը
			նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	252	Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Ակտիվների հերթական դասակարգումը և պահուստների ճշգրտումներն իրականացնելիս, վարկային կազմակերպությունը ընդհանուր և հատուկ պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է ծախսերի հաշվին
			Եթե բանկի հաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) բանկի կողմից այլ անձի անհատույց գիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշռից դուրս գրվելը, դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ

			Յուրաքանչյուր վարկային կազմակերպություն ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար
			Կենտրոնական բանկի վերահսկողության ծառայությունը, Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, կարող է վերահսկողության արդյունքում պարտավորեցնել վարկային կազմակերպությանը որոշակի գումարով պահուստ ձևավորել կոնկրետ ակտիվի կամ ակտիվների խմբի համար՝ առանց ակտիվի (ակտիվների) դասակարգման
	253	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, գրանցման և լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման ընդունման պահից.	եռօրյա ժամկետում վարկային կազմակերպությանը տրվում է գրանցման վկայականը
			մեկամսյա ժամկետում տրամադրվում է վարկային կազմակերպության լիցենզիան
			վարկային կազմակերպությանը տրվում է ֆիրմային անվանման գրանցման վկայականը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	254	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը լիցենզավորված վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ	վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում
			վարկային կազմակերպությունը պետք է տարեկան վճարի Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին
			վարկային կազմակերպության լիցենզիան չի կարելի փոխանցել, վաճառել կամ փոխանակվել
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	255	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը լիցենզավորված վարկային կազմակերպությանը լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ	Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը պետք է Կենտրոնական բանկի դիմում ներկայացնի լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար
			վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը վարկային կազմակերպության կողմից պարտադիր պետք է տեղադրվի իր ինտերնետային կայքում
			պետք է վճարել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	256	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե	վարկային կազմակերպության առաջարկվող ներքին հսկողության համակարգը բավարար չի վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար
			ներկայացվել են կեղծ տեղեկություններ
			վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	257	Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե	չի վճարվել վարկային կազմակերպության գործունեության համար տարեկան պետական տուրքը
			վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին
			վարկային կազմակերպության առաջարկվող ներքին կազմակերպական կառուցվածքը բավարար չէ վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համար
			ճիշտ պատասխանը նշված չէ

		Չամաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, եթե վարկային կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) վարկային կազմակերպության կողմից այլ անձի անհատույց գիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշռից դուրս գրվելը, ապա	
258			դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ
			դրանք նույնպես հանդիսանում են շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ
			շահութահարկի հաշվարկման նպատակով բանկի հաշվետու ժամանակաշրջանի հարկվող եկամտում ավելանում է այդ ակտիվի (կամ դրա մի մասի) գումարի չափով
			ճիշտ պատասխանը նշված չէ
259		Համաձայն Կանոնակարգ 13-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Կորած լիցենզիան գտնելու դեպքում վարկային կազմակերպությունը գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ
			Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը վարկային կազմակերպությանը տրամադրում է համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում
			Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար՝ կցելով լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը
			նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են
260		Համաձայն Կանոնակարգ 13-ի, լիցենզիայի կորստի դեպքում վարկային կազմակերպությունը	դրա մասին հայտարարություն է տալիս առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում
			դրա մասին հայտարարություն է տալիս զանգվածային լրատվամիջոցներից որևէ մեկով
			Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար
			բոլոր պատասխանները ճիշտ են
261		Համաձայն Կանոնակարգ 13-ի, լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է.	Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում:
			Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում:
			Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, լիցենզավորված անձի համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում:
			ճիշտ պատասխանը նշված չէ
262		Համաձայն Կանոնակարգ 13-ի, լիցենզիայի վերաձևակերպման համար	լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում և վարկային կազմակերպության գործունեության համար վճարված տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը

			լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում՝ կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և վարկային կազմակերպության գործունեության համար վճարված տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը	
			լիցենզավորված անձը Կենտրոնական բանկ ներկայացնում է լիցենզիայի վերաձևակերպման մասին դիմում՝ կցելով համապատասխան փոփոխությունները հավաստող փաստաթղթերը և լիցենզիայի վերաձևակերպման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը	
			ճիշտ պատասխանը նշված չէ	
		Նշել սխալ պատասխանը: 263 Վարկային կազմակերպությունները ներկայացուցչությունների բացման և գրանցման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.	ներկայացուցչության ստեղծելու հիմնավորումը ներկայացուցչության կանոնադրությունը	
			վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին	
			ներկայացուցչության գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը	
		Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղերի բացման և գրանցման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը	վարկային կազմակերպության մասնաճյուղի ֆիրմային անվանման գրանցման հայտը վարկային կազմակերպության կանոնադրությունը վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը նշված բոլոր պատասխանները ճիշտ են	
		264	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր ստեղծելիս Կենտրոնական բանկ են ներկայացնում.	մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը մասնաճյուղի գրանցման պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը ճիշտ պատասխանը նշված չէ
		265	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր ստեղծելիս Կենտրոնական բանկ են ներկայացնում.	ներկայացուցչություն ստեղծելու հիմնավորումը վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը ներկայացուցչության կանոնադրությունը
		266	Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում ներկայացուցչություններ ստեղծելիս Կենտրոնական բանկ են ներկայացնում.	ներկայացուցչություն ստեղծելու հիմնավորումը վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին պատճենը կամ նոտարական կարգով վավերացված վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը և վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը ներկայացուցչության կանոնադրությունը
		267	Համաձայն Կանոնակարգ 13-ի, վարկային կազմակերպության ներկայացուցչությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցումից հանվում է	ճիշտ պատասխանը նշված չէ

			մեկշաբաթյա ժամկետում
			ընդունման օրվանից եռօրյա ժամկետում
			ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում
268	Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպությունները ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղերի բացման և գրանցման համար ԿԲ են ներկայացնում		վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը՝ 3 օրինակից մասնաճյուղի հաստատված կանոնադրությունը՝ 6 օրինակից վարկային կազմակերպության հաստատված կանոնադրությունը՝ 3 օրինակից ճիշտ պատասխանը նշված չէ
269	Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ստանալու համար ԿԲ նախնական համաձայնությունը պարտադիր է.		ֆիզիկական անձանց համար իրավաբանական անձանց համար միջազգային կազմակերպությունների համար բոլոր պատասխանները ճիշտ են
270	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները օտարերկրյա պետությունների տարածքներում մասնաճյուղեր (կամ ներկայացուցչություններ) բացելիս այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ պետությունում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո		յոթ օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան փաստաթղթեր՝ Կենտրոնական բանկում ևս գրանցվելու և լիցենզավորվելու նպատակով Կենտրոնական բանկին տեղեկացնում են համապատասխան մասնաճյուղի (ներկայացուցչության) բացման վերաբերյալ յոթ օրվա ընթացքում Կենտրոնական բանկ են ներկայացնում գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթը՝ Կենտրոնական բանկում գրանցվելու նպատակով ճիշտ պատասխանը նշված չէ
271	կազմակերպությունների ՀՀ տարածքում ներկայացուցչությունների բացման և գրանցման համար վարկային կազմակերպությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը		ներկայացուցչության ստեղծելու հիմնավորումը ներկայացուցչության կանոնադրությունը վարկային կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից բաղկացած՝ ներկայացուցչություն ստեղծելու մասին նշված բոլոր պատասխանները ճիշտ են
272	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն Կանոնակարգ 13-ի, գործող վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող իրավաբանական անձը ԿԲ նախնական համաձայնությունը ստանալու համար ԿԲ է ներկայացնում իրավաբանական անձի վերջին երեք տարիների տարեկան և վերջին միջանկյալ ա) հաշվապահական հաշվեկշիռը բ) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը գ) տնտեսական նորմատիվների մասին հաշվետվությունը դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը		միայն (բ) և (գ) միայն (ա), (գ) և (դ) միայն (ա), (բ) և (դ) միայն (բ) , (գ) և (դ)
273	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող պետությունը պարտավոր է նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը		նշանակալից մասնակցություն ակնկալող պետության հայտարարագիրը՝ մասնակցություն ձեռք բերելուց հետո վարկային կազմակերպության ռազմավարության մեջ իր կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ հայտարարագիր՝ չմարված և չներված պարտավորությունների մասին ներդրման ենթակա միջոցների ծագման օրինականությունը հիմնավորող փաստաթղթեր

			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
274	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամի թեկնածուների) քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել.	հեռախոսով	ԿԲ ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով
		գրավոր ձևով ուղարկված դիմումով	նշված բոլոր պատասխանները ճիշտ են
275	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, թեկնածուները (բացառությամբ խորհրդի նախագահի և խորհրդի անդամի թեկնածուների) քննությանը մասնակցելու համար կարող են հերթագրվել. ա) հեռախոսով բ) գրավոր ձևով ուղարկված դիմումով գ) էլեկտրոնային փոստով դ) ԿԲ ինտերնետային կայքի համապատասխան էջում տվյալներ մուտքագրելով	միայն ա) և բ) տարբերակները	
			միայն գ) և դ) տարբերակները
			միայն ղ) տարբերակը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
276	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշել ճիշտ պնդումը.	Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ	Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության վարչության անդամ
			Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝ միայն տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու դեպքում
			Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը կարող է լինել նաև տվյալ վարկային կազմակերպության տնօրինության անդամ՝ առանց տնօրինության անդամի որակավորման վկայական ստանալու
277	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպությունում	միայն որպես գլխավոր հաշվապահ	միայն որպես գլխավոր հաշվապահի տեղակալ
			որպես գլխավոր հաշվապահ կամ հաշվապահի տեղակալ
			որպես վերստուգիչ հանձնաժողովի անդամ
278	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը միաժամանակ կարող է լինել	տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ	տվյալ վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի
			տվյալ վարկային կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալ (առկայության դեպքում)
			ճիշտ պատասխանը նշված չէ
279	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ	ճիշտ պատասխանը նշված չէ
			Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ
			Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ
280	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի	միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ	



			միաժամանակ կարող է աշխատել վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ, տնօրինության (վարչության) անդամ
			Ճիշտ պատասխանը նշված չէ
			միաժամանակ չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից
	281	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, խնայողական միության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը	կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության գործադիր տնօրեն
			կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության այլ աշխատակից
			կարող է միաժամանակ լինել տվյալ խնայողական միության գլխավոր հաշվապահ
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	282	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ չի կարող լինել տվյալ վարկային կազմակերպության այլ աշխատակից
			Բանկի ներքին աուդիտի ղեկավարի, բանկի ներքին աուդիտի անդամի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ (վերստուգող), վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ
			Բանկի գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստացած անձը կարող է աշխատել վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ
			Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը միաժամանակ կարող է լինել տվյալ վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար
	283	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է.	մինչև նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը
			ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով
			ստորագրման պահից հաշված երկու տարի ժամկետով
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	284	Համաձայն «Կանոնակարգ 13»-ի, վարկային կազմակերպության խորհրդի նախագահի և անդամների որակավորումը տրվում է.	ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով
